ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-574-02.05.2023-ՖՎ-012/0) վերաբերյալ

Կառավարության կողմից «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-574-02.05.2023-ՖՎ-012/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Ստորև ներկայացվում են իրավական, սոցիալական փորձաքննության արդյունքները և Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ տեղեկանքը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

15.05.2023թ.

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի 1-ին պարբերությունում «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը» բառերն առաջարկում ենք փոխարինել «Ազգային ժողովը» բառերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթը, այն է՝ «*1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ.*»:

2. Նախագծի 2-րդ պարբերությունում կիրառված «դրամ» բառերն առաջարկում ենք փոխարինել «հայկական դրամ» բառերով՝ հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հասկացությունը, այն է՝ «*Հայաստանի Հանրապետության արժույթը հայկական դրամն է.*»: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումները խնդրահարույց չեն Սահմանադրության տեսանկյունից:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծի համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարող՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)
11.05.2023թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
Կատարող՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)
11.05.2023թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ (փաստաթղթային կոդ՝ Կ-574-02.05.2023-ՖՎ-012/0)

ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն) ներկայացված է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Համաձայն Հաշվետվության, ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,063.1 մլրդ. դրամ, ծախսերը՝ 2,242.6 մլրդ. դրամ, իսկ բյուջեի դեֆիցիտը՝ 179.5 մլրդ. դրամ:

Սույն Հաշվետվության առումով, կարծում ենք, հատկանշական կարելի է համարել հետևյալ տեղեկություններն ու միտումները:

1. 2022 թվականին գրանցել է ՀՆԱ-ի 12.6% իրական աճ, ինչը բավականաչափ բարձր ցուցանիշ է և կարելի է բավարար նախադրյալ դիտարկել տնտեսության վերականգնման համար: 2022 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 3.4%, ընդ որում՝ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 2.1%, Եվրոգոտու տնտեսությունը՝ 3.5%, Չինաստանի տնտեսությունը՝ 3.0%, իսկ Ռուսաստանի տնտեսությունը՝ 2.1% տնտեսական անկում:

2. Հաշվետու ժամանակաշրջանում գրանցված տնտեսական աճը առավելապես պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների աճով՝ (նպաստումը՝ 9.3 տոկոսային կետ): Արդյունաբերությունը և շինարարությունը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 1.3 և 1.2 տոկոսային կետեր), իսկ գյուղատնտեսության նվազումը բացասաբար է ազդել տնտեսական աճի վրա (նպաստումը՝ 0.1 տոկոսային կետ):

3. 2022 թվականին սպառումն իրական արտահայտությամբ աճել է 7.7%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնավոր հատվածի սպառման աճով, որին նպաստել են բնակչության տնօրինվող եկամտի աճը (այդ թվում՝ դրամական փոխանցումների բարձր աճը, ինչպես նաև ծառայությունների ոլորտում աշխատավարձերի բարձր աճը) և համավարակի պայմաններում կուտակված խնայողությունների օգտագործումը: Մասնավոր սպառման աճին դրական նպաստում է ունեցել նաև դեպի Հայաստան զբոսաշրջիկների հոսքի մեծ աճը, ինչպես նաև սպառողական վարկավորման աճը Պետական սպառումը ևս աճել է՝ նպաստելով ընդհանուր սպառման աճին

Հաշվետու տարում կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աճել են 9.5%-ով՝ պայմանավորված մասնավոր պետական ներդրումների աճով: Մասնավոր ներդրումների վրա դրական ազդեցություն են ունեցել հիպոտեկային և շինարարության վարկերի ծավալների աճը:

2022 թվականին ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 54.4%-ով՝ պայմանավորված արտաքին պահանջարկի աճով (SS, զբոսաշրջիկներին մատուցված ծառայությունների աճ), ինչպես նաև ՌԴ ներմուծման շուկաների սահմանափակման արդյունքում՝ դեպի ՌԴ արտահանման ծավալների աճով: Հաշվետու ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 33.8%-ով՝ պայմանավորված տնտեսական ակտիվության և ներքին պահանջարկի աճով: Ներմուծման աճին դրական նպաստում են

ունեցել նաև արժևորված ազգային արժույթը և տնտեսվարողների կողմից ազգային արժույթի արժեզրկման սպասումներով պայմանավորված՝ ներմուծման ծավալների աճը:

4. 2022 թվականին 12-ամսյա գնաճը զգալիորեն արագացել է՝ հունիսին հասնելով մինչև 10.3%, ապա նվազել՝ դեկտեմբերին կազմելով 8.3%, իսկ միջին գնաճը տարվա համար կազմել է 8.6%: Միջին գնաճին առավելապես նպաստել է «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 13% գների աճը (նպաստումը գնաճին՝ 4.8 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (հացաբուլկեղեն և ձավարեղեն, բանջարեղեն, միս, կաթնամթերք և այլն) գների աճերով: «Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» խմբում արձանագրվել է 8.2% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.4 տոկոսային կետ), իսկ «Ոչ պարենային ապրանքներ» խմբում արձանագրվել է 7% գնաճ (նպաստումը գնաճին՝ 1.6 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորված է հագուստի և կոշիկի, էլեկտրաէներգիայի և վառելիքի գների աճով:

5. 2022 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել է և կազմել ՀՆԱ-ի 0.9%-ը: Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2022 թվականին աճել են մոտ 20%-ով՝ հիմնականում պայմանավորված ինչպես տրանսֆերտների ներհոսքով, այնպես էլ ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում ՌԴ-ից դեպի ՀՀ փոխանցվող այլ դրամական հոսքերով: Նշված զարգացումների արդյունքում 2022 թվականին նախորդ տարվա համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդը բարելավվել է ՀՆԱ-ի 2.9 տոկոսային կետի չափով:

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2022 թվականի արդյունքներով կազմել է 14128.7 մլն. ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 68.6%-ով: Հաշվետու ժամանակահատվածում տեղի է ունեցել դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման ծավալների աճ. արտահանումն աճել է 77.7%-ով՝ կազմելով 5360.1 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 63.5%-ով և կազմել է 8768.7 մլն. ԱՄՆ դոլար:

Ներմուծման ծավալների աճին հիմնականում նպաստել են «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (15.3 տոկոսային կետ), «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (12.3 տոկոսային կետ), «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (8.2 տոկոսային կետ), «Հանքահումքային արտադրանք» (4.8 տոկոսային կետ), «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (4.3 տոկոսային կետ) ապրանքախմբերը: Արտահանման աճին հիմնականում

նպաստել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (22 տոկոսային կետով), «Մեքենաներ և սարքավորումներ» (21.2 տոկոսային կետով), «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (9.4 տոկոսային կետով), «Պատրաստի սննդի արտադրանք» (8.4 տոկոսային կետով) և «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերը:

6. 2022 թվականին դրամի միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորվել է համապատասխանաբար 15.6%-ով, 29.4%-ով և 5.5%-ով:

7. 2022 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 24.3%-ը՝ նախորդ տարվա 24.1%-ի դիմաց, իսկ հարկային եկամուտները՝ ՀՆԱ-ի 22.7%-ը՝ պահպանվելով նախորդ տարվա գրեթե նույն մակարդակում (նվազելով 0.06 տոկոսային կետով):

Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2021 թվականի նկատմամբ նվազել է 2.3 տոկոսային կետով՝ կազմելով 26.4%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 3.7 տոկոսային կետով՝ կազմելով 21.9%:

ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 2.1 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.5 տոկոսային կետով: ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 46.7 տոկոս՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 13.6 տոկոսային կետով:

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

8. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով ծրագրվել էր ստանալ 1,947.8 մլրդ. դրամ եկամուտներ, որից 1,906.0 մլրդ. դրամը՝ ներքին աղբյուրների, 41.8 մլրդ. դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումներն ու դրանց արդյունքում ձևավորված եկամուտները, որոնք կազմել են ավելի քան 1.2 մլրդ դրամ: Բացի այդ, կառավարությունը, ի լրումն եկամուտների ցուցանիշների վերոնշյալ փոփոխությունների, իր լիազորությունների շրջանակում ևս 110.4 մլրդ դրամով (5.7%-ով) վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը: Մասնավորապես՝ ծրագիրը 81.1 մլրդ դրամի չափով ավելացվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով հարկաբյուջետային քաղաքականության վերանայման արդյունքում, 51.2 մլրդ դրամի չափով ավելացվել է այլ եկամուտների ծրագիրը՝ հիմնականում պայմանավորված բյուջեի ժամանակավոր ազատ

միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների և օրենքով ու իրավական այլ ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով լրացուցիչ մուտքերով:

2022 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 2,063.1 մլրդ դրամ՝ ապահովելով կառավարության կողմից ճշտված ծրագրի 100.2% կատարողական: Նշված գումարից 2,048.1 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով ծրագրի 100.5%-ը, 15 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով, որոնք 64.1%-ով զիջել են ծրագրված ցուցանիշը: 2021 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 22.5%-ով կամ 379.3 մլրդ դրամով, որը պայմանավորված է հարկային եկամուտների և պետական տուրքերի աճով:

2022 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 24.3%՝ կանխատեսված 24.8%-ի և նախորդ տարվա 24.1%-ի դիմաց:

9. Պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են շուրջ 1,926.0 մլրդ. դրամ, որոնք 104.4%-ով ապահովել են ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: 2021 թվականի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 21.4%-ով կամ 339.1 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտային հարկի գծով մուտքերի աճով: 2021 թվականի համեմատ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ մաքսատուրքի: Միաժամանակ, 2022 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել ԱԱՀ-ի, եկամտային հարկի և ակցիզային հարկի գծով վերադարձված գումարների աճը, որոնք կազմել են 261.9 մլրդ դրամ՝ 45.3%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարները 2021 թվականին կազմել են 212.8 մլրդ դրամ, իսկ եկամտային հարկի գծով վերադարձված գումարները՝ 47.4 մլրդ դրամ: Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2022 թվականին կազմել է 22.7%, որը 0.7 տոկոսային կետով զիջել է կանխատեսված ցուցանիշը, իսկ 2021 թվականի փաստացի ցուցանիշի համեմատ մնացել է անփոփոխ:

10. 2022 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքերի 35.3%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 679.6 մլրդ. դրամ: Նշված գումարից 443.1 մլրդ. դրամը ստացվել է ներմուծման հարկումից, 236.5 մլրդ. դրամը՝ ապրանքների և ծառայությունների ներքին շրջանառությունից: 2021 թվականի համեմատությամբ ԱԱՀ-ի գծով մուտքերն ավելացել են 123.6 մլրդ դրամով:

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 6.6%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 127.5 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծվող ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է 60.9 մլրդ դրամ, իսկ հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից՝ 66.6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ակցիզային հարկի մուտքերի աճը պայմանավորված է ինչպես հանրապետությունում արտադրվող, այնպես էլ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի աճով: Ակցիզային հարկի գծով մուտքերի աճը բացատրվում է հիմնականում 2021 թվականի դեկտեմբերին ակցիզային հարկով հարկվող ապրանքների իրացման և ներմուծման ծավալների աճով, որով էլ պայմանավորված՝ 2022 թվականի հունվարին վճարման ենթակա ակցիզային հարկի մուտքերն էականորեն աճել են:

2022 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 11. 6%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ 222.8 մլրդ դրամ և 40.5%-ով (64.2 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերի վրա իրենց ազդեցությունն են ունեցել ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահութահարկի և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազաների աճը: Մասնավորապես, 2022 թվականին ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համախառն եկամուտները կազմել են 10,387.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 24.3%-ով կամ 2,029.2 մլրդ դրամով: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2022 թվականի հարկվող շահույթը կազմել է 1,078.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 33%-ով կամ 267.7 մլրդ դրամով:

Հաշվետու տարում ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է շուրջ 474.8 մլրդ. դրամ եկամտային հարկ՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 24.7%-ը: Նախորդ տարվա համեմատ եկամտային հարկի 11.4% (48.5 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է 2022 թվականին աշխատատեղերի և միջին աշխատավարձերի աճով: Մասնավորապես, 2022 թվականին գրանցված աշխատատեղերի թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 5.4%-ով, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 15.5%-ով: Նշված երկու գործոնների համադրմամբ, եկամտային հարկի հարկման բազայի նպաստումը եղել է 21.7 տոկոս: Միաժամանակ, եկամտային հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն է ունեցել եկամտային հարկի գծով վերադարձված գումարների

աճը: 2022 թվականին եկամտային հարկի գծով վերադարձված գումարները կազմել են 47.4 մլրդ դրամ՝ 45.2%-ով կամ 14.7 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2022 թվականին պետական բյուջե մուտքագրված մաքսատուրքը կազմել է 56.7 մլրդ. դրամ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 2.9%-ը: 2022 թվականի ընթացքում ԵԱՏՄ երկրներից (այդ թվում՝ ՀՀ-ից) մաքսատուրքերի բաշխման արդյունքում ստացվել են 55.1 մլրդ դրամ մուտքեր: Նախորդ տարվա համեմատ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից փոխանցված մաքսատուրքերի գծով մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է 2022 թվականին ՌԴ դեմ ԵՄ և արևմուտքի մի շարք երկրների կողմից սահմանված պատժամիջոցներով: Միաժամանակ, երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքներից գանձվող մաքսատուրքի գծով մուտքերն ավելի քան 1.3 մլրդ դրամով կամ 7 անգամ գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը, որը հիմնականում բացատրվում է ֆիզիկական անձանց կողմից ներմուծված ապրանքների ծավալների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2. 1%-ն ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 40.7 մլրդ դրամ և 25.7%-ով (8.3 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ շրջանառության հարկի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է տնտեսական ակտիվության աճով, հատկապես այն ոլորտներում, որտեղ գործում են շրջանառության հարկով հարկվող գործունեություն ծավալող հարկ վճարողները: Մասնավորապես, առևտրի ծավալներն աճել են 17%-ով, արդյունաբերական արտադրանքի ծավալները՝ 7.9%-ով, իսկ ծառայությունների ծավալները՝ 28.2%-ով:

2022 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 5%-ն ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարի հաշվին:

Հաշվետու տարվա ընթացքում 64. 5 մլրդ. դրամ են կազմել սոցիալական վճարները, 37 մլրդ դրամ՝ դրոշմանիշային վճարները, 6. 8 մլրդ դրամ՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարները, 4.8 մլրդ դրամ՝ ճանապարհային հարկի գծով փաստացի մուտքերը:

11. 2022 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 106.8 դրամ պետական տուրքեր՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 111.1%-ը:: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերը նվազել են 27.1%-ով կամ շուրջ 12.4 մլրդ. դրամով: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերի 59.7% (39.9 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա կամ

թույլտվություններով գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի աճով:

12. 2022 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են շուրջ 15 մլրդ. դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 75.4%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել շուրջ 4.9 մլրդ դրամ: Արձանագրված շեղումը գլխավորապես պայմանավորված է նպատակային ծրագրերի կատարողականով, ինչպես նաև արտարժույթների ծրագրված և փաստացի փոխարժեքների տարբերություններով:

13. 2022 թվականին ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 122.1 մլրդ. դրամի այլ եկամուտներ՝ 7.8%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այլ եկամուտների 44.5% (37.6 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ եկամուտների և բանկերում ու այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարների գծով մուտքերի աճով:

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

14. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հաստատված ծախսերը կազմել են 2,184.0 մլրդ. դրամ, իսկ ճշտված ծրագիրը՝ 2,288.0 մլրդ. դրամ:

Պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 2,242.6 մլրդ. դրամ, իսկ տարեկան ճշտված ծրագիրը կատարվել է 98%-ով: Ճշտված ծրագրից շեղման ընդհանուր գումարի 56. 8%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 43. 2%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 97.5%-ը կամ 2,185.6 մլրդ դրամը, որոնց տարեկան ծրագիրը կատարվել է 98.6%-ով: Բյուջեի ծախսերի 2.5%-ը՝ 57.1 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է տարեկան ծրագրի 79.1%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 11.9%-ով կամ 238.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված կապիտալ ծախսերի, կենսաթոշակների և դրամաշնորհների գծով ծախսերի աճով:

15. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը տրամադրվել է 1,862.2 մլրդ. դրամ: Հաշվետու տարում շուրջ 194.1 մլրդ. դրամ տրամադրվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը: Նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերն աճել են 12. 7 մլրդ դրամով:

16. 2022 թվականին պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 389.1մլրդ. դրամ կամ տարեկան ճշտված ծրագրի 94.9%-ը: 2021 թվականի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների 75.8% (164.1 մլրդ դրամ) աճը պայմանավորված են կապիտալ ծախսերով:

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

17. ՀՀ 2022 թվականի պետական բյուջեն կատարվել է 179.5 մլրդ. պակասուրդով՝ կազմելով ծրագրի 78.1%-ը և 44%-ով (140.9 մլրդ դրամով) զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի համեմատ պակասուրդի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է եկամուտների՝ ծրագրվածից ավել հավաքագրման և ծախսերի համեմատաբար ցածր կատարողականով, որի արդյունքում ֆինանսավորման ներքին աղբյուրներում նախատեսված՝ բյուջեի ազատ միջոցներից օգտագործվել է 20.2 մլրդ դրամ՝ նախատեսված 41.5 մլրդ դրամի փոխարեն: Արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում ստացվել է նախատեսված վարկային միջոցների 83%-ը՝ 165.8 մլրդ դրամ:

Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2022 թվականին կազմել է 2.1%՝ կանխատեսված 3%-ի և 2021 թվականի 4.6%-ի դիմաց:

2021 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի պակասուրդը զգալի չափով (68.4%-ով) ֆինանսավորվել էր արտաքին աղբյուրներից՝ պայմանավորված արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմամբ, ապա 2022 թվականին պակասուրդն ամբողջությամբ ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին:

Արտաքին վարկերի մարմանը հաշվետու տարում ուղղվել է շուրջ 99.6 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 98.2%-ը:

19. 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 44,186.7 մլրդ դրամ (10,637.7 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ նախորդ տարեվերջի համեմատ ՀՀ պետական պարտքի ցուցանիշները փոփոխվել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար նվազել 5.5%-ով և աճել 15.3%-ով: Դա պայմանավորված է եղել 2021 թվականի տարեվերջի և 2022 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքների տարբերությամբ, որը փոփոխվել է 18%-ով՝ 480.14-ից նվազելով մինչև 393.57: ՀՀ պետական պարտքում 2,536.7 մլրդ

դրամը (6,445.4 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 1,650.0 մլրդ դրամը (4,192.3 մլն ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը: 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարվա համեմատությամբ դրամային արտահայտությամբ նվազել է 242.9 մլրդ դրամով, իսկ դոլարային արտահայտությամբ աճել է 1,412.0 մլն ԱՄՆ դոլարով:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 49.3%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 14.2 տոկոսային կետով: Ընդ որում կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 46.7%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 13.6 տոկոսային կետով:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ներքին պետական պարտքը նախորդ տարեվերջի համեմատ աճել է 412.5 մլրդ դրամով (33.3%-ով), և դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում աճել է՝ 27.9%-ից հասնելով 39.4%-ի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ
Կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան (Հեռ.՝ 011 513-603)
12.05.2023թ.

Սոցիալական փոխհատուցման արդյունքները

Կառավարության կողմից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը» (այսուհետ՝ Հաշվետվություն): Այն համապատասխանում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և «Հայաստանի

Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

Սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից հատկանշական ենք համարում հետևյալ փաստերի և միտումների արձանագրումը:

1. Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում գործազրկությունը նվազել է, իսկ զբաղվածությունը և աշխատավարձերը՝ աճել 2022 թվականին գործազրկության մակարդակը 2021 թվականի նկատմամբ նվազել է 2.5 տոկոսային կետով՝ կազմելով 13%: Գործազուրկների թիվը նույն ժամանակահատվածում նվազել է 14.5%-ով՝ կազմելով 170.1 հազ. մարդ, իսկ զբաղվածների թիվն աճել է 4.7%-ով՝ կազմելով 1,139.1 հազ. մարդ:

2. 2022 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նկատմամբ աճել է 15.5%-ով՝ կազմելով 235,576 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 4.3%-ով՝ կազմելով 186,940 դրամ, իսկ ոչ պետականում՝ 19.0%-ով և կազմել է 256,733 դրամ: Իրական աշխատավարձը 8.6% գնաճի պայմաններում աճել է 6.3%-ով:

3. 2021 թվականի համեմատ կենսաթոշակների գծով ծախսերն աճել են՝ հիմնականում պայմանավորված կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների հաշիվներին կատարված հատկացումների և մասնակիցների թվի աճով (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեից տրամադրված նպաստները և կենսաթոշակները (մլրդ դրամ)

	2021թ. փաստ	**2022թ. ճշտված պլան**	**2022թ. փաստ**	**Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)**	**2022թ 2021թ. նկատմամբ (%)**
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	**621.2**	**618.1**	**613.1**	**99.2**	**98.7**
Նպաստներ	244.8	207.1	202.3	97.7	82.6
Կենսաթոշակներ	376.4	411.0	410.8	99.9	109.2

Կենսաթոշակների գծով ծախսերի աճը փաստացի կազմել է 118.7 մլրդ դրամ՝ 16.8%-ով կամ 17.1 մլրդ դրամով՝ գերազանցելով 2021 թվականի ցուցանիշը, աշխատանքային կենսաթոշակներն աճել են 5.4%-ով և կազմել 12.8 մլրդ դրամ, իսկ սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակները՝ 13.1%-ով, կազմելով 4.3 մլրդ դրամ:

4. ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատվությամբ 2022 թվականի ընթացքում կատարվել են 12 ծրագրեր, որոնց տրամադրվել է 140.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 98.7%-ը, ընդ որում՝ գրեթե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2

2022թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2021թ. փաստ	2022թ. ճշտված պլան	2022թ. փաստ	Կատարող-ականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2022թ. 2021թ. նկատմամբ (%)	2022թ. և 2021թ. տարբե-րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**157,909.7**	**142,440.4**	**140,622.3**	**98.7**	**89.1**	**(17,287.4)**
Հանրային առողջության պահպանում	40,997.1	17,145.3	16,778.9	97.9	40.9	(24,218.2)
Առողջության առաջնային պահպանում	28,444.1	28,308.7	28,292.6	99.9	99.5	(151.5)
Մոր և մանկան առողջության պահպանում	19,245.7	19,796.6	19,756.2	99.8	102.7	510.5
Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում	17,340.8	19,047.5	18,967.3	99.6	109.4	1,626.5
Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	34,066.2	35,926.0	35,635.4	99.2	104.6	1,569.2
Այլ ծրագրեր	17,815.7	22,216.3	21,191.9	95.4	119.0	3,376.2

2021 թվականի համեմատ առողջապահության նախարարության ծախսերը նվազել են 10.9%-ով կամ 17.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Հանրային առողջության պահպանման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

5. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվության ներքո 2022 թվականի ընթացքում իրականացվել են 21 ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է 202.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.3% կատարողական: Գրեթե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ: Առանձնապես խոշոր շեղումներ են արձանագրվել Ապահով դպրոց (1.1 մլրդ դրամ), Հանրակրթության (1 մլրդ դրամ) և Կրթության որակի ապահովման (839.7 մլն դրամ) ծրագրերում: Նախորդ տարվա համեմատ նախարարության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների, Ապահով դպրոց, Մեծ նվաճումների սպորտի ու Հանրակրթության ծրագրերի գծով ծախսերի աճով (տես աղյուսակ 3-ը):

Աղյուսակ 3

2022թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2021թ. փաստ	2022թ. ճշտված պլան	2022թ. փաստ	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2022թ. 2021թ. նկատմամբ (%)	2022թ. և 2021թ. տարբե-րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**174,809.5**	**208,146.7**	**202,606.2**	**97.3**	**115.9**	**27,796.7**
Մեծ նվաճումների սպորտ	3,048.1	8,307.6	8,172.6	98.4	268.1	5,124.4
Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	10,414.6	11,374.8	10,814.2	95.1	103.8	399.6

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	12,546.0	12,548.7	12,373.5	98.6	98.6	(172.6)
Հանրակրթության ծրագիր	99,421.5	104,311.8	103,305.7	99.0	103.9	3,884.3
Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	15,142.2	22,275.4	22,154.0	99.5	146.3	7,011.9
Արվեստների ծրագիր	8,854.4	11,072.3	10,691.6	96.6	120.7	1,837.1
Ապահով դպրոց	3,807.1	11,642.3	10,511.5	90.3	276.1	6,704.5
Կրթության որակի ապահովում	4,084.2	4,835.2	3,995.4	82.6	97.8	(88.8)
Այլ ծրագրեր	17,491.4	21,778.5	20,587.6	94.5	117.7	3,096.2

6. 2022 թվականի ընթացքում ավելի քան 103.3 մլրդ դրամ է տրամադրվել *Հանրակրթության ծրագրի* շրջանակներում՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ Հանրակրթության ծրագրի ծախսերն աճել են 3.9%-ով կամ 3.9 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հիմնական ընդհանուր հանրակրթության միջոցառման շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Ընդհանուր հանրակրթության ծախսերը 2022 թվականին կատարվել են 99.7%-ով՝ կազմելով 93.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 3.6%-ով կամ 3.3 մլրդ դրամով, որը պայմանավորված է սննդի կազմակերպման նպատակով տրամադրվող ֆինանսական միջոցների հաշվարկման նորմատիվների բարեփոխումներով՝ մեկ սովորողի համար սննդի համար հատկացվող գումարի ավելացմամբ (տես աղյուսակ 4-ը):

Աղյուսակ 4

Ընդհանուր հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2021թ. սովորողների փաստացի թիվ	2022թ. սովորողների փաստացի թիվ	2022թ. և 2021թ. տարբերությունը	2021թ. փաստ (մլն դրամ)	2022թ. փաստ (մլն դրամ)	2022թ. 2021թ.-ի նկատմամբ (%)
Ընդհանուր հանրակրթություն	**390,347**	**390,151**	**(196)**	**89,922.6**	**93,182.1**	**103.6**
Տարրական	152,362	150,750	(1,612)	33,740.3	33,746.5	100.0
Հիմնական	178,166	180,803	2,637	39,391.2	42,363.5	107.5
Միջնակարգ	59,819	58,598	(1,221)	16,791.0	17,072.2	101.7

7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ 2022 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի 16 ծրագիր, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 613.6 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 98.9% կատարողական, ընդ որում՝ բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ (տես աղյուսակ 5-ը):

Աղյուսակ 5

2022թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2021թ. փաստ	2022թ. ճշտված պլան	2022թ. փաստ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2022թ. 2021թ. նկատմամբ (%)	2022թ. և 2021թ. տարբերությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**619,774.1**	**620,369.2**	**613,585.5**	**98.9**	**99.0**	**(6,188.6)**
Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	30,656.1	27,703.9	27,575.5	99.5	90.0	(3,080.6)

Սոցիալական փաթեթների ապահովում	9,404.4	9,926.8	9,248.4	93.2	98.3	(156.0)
Ժողովրդագրական վիճակի բարելավում	28,343.8	41,039.1	39,968.0	97.4	141.0	11,624.2
Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	19,289.1	20,090.0	20,069.1	99.9	104.0	780.0
Կենսաթոշակային ապահովություն	377,573.1	412,212.4	411,947.2	99.9	109.1	34,374.1
Սոցիալական ապահովություն	124,978.4	74,880.3	73,898.9	98.7	59.1	(51,079.5)
Այլ ծրագրեր	29,529.2	34,516.7	30,878.5	89.5	104.6	1,349.2

Նախորդ տարվա համեմատ ՀՀ ԱՍՀՆ պատասխանատվությամբ իրականացվող ծախսերը նվազել են 1%-ով կամ 6.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Սոցիալական ապահովության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի անկմամբ: Միևնույն ժամանակ՝ զգալի աճ է արձանագրվել Կենսաթոշակային ապահովության և Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրերի ծախսերում:

8. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվությամբ 2022 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 6 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 7.3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 85.4%-ը (տես աղյուսակ 6-ը): Շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման, ինչպես նաև Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և մոնիթորինգի ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի 0.9% (67.6 մլն դրամ) աճ:

Աղյուսակ 6

2022թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2021թ. փաստ	2022թ. ճշտված պլան	2022թ. փաստ	Կատարող-ականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2022թ. 2021թ.-ի նկատմամբ (%)	2022թ. և 2021թ. տարբեր-ությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	**7,213.7**	**8,528.8**	**7,281.3**	**85.4**	**100.9**	**67.6**
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ	2,050.8	2,124.4	1,795.1	84.5	87.5	(255.7)
Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում	1,498.2	2,664.5	1,821.2	68.4	121.6	323.0
Անտառների կառավարում	1,818.8	2,193.2	2,139.7	97.6	117.6	320.9
Այլ ծրագրեր	1,845.9	1,546.6	1,525.3	98.6	82.6	(320.6)

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ԼԻԼԻԹ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Դալլաքյան (հեռ.՝ 011-513-235, 12-35)

15.05.2023թ.